կան սեռի դպրոցների հաւասար՝ հարկաւոր է ունենալ և իգական սեռի բարեկարգ դպրոցներ, որոց մէջը ամէն ուսմունքներից փոքրը 'ի շատէ ուսեալ Օրիորդները քանի տարիից յետոյ՝ պիտի նոր սերունդների նախադաստիարակ մայրեր լինին։

Ե.

Մի նոր լեզուն բացուած մանուկ, երբ սկսած է հասակով օրէ ցօր զարգանալ, նորա համար մարմնական սննդեան հետ՝ կարևոր է և հոգեկան սնունդ. նախ՝ կը ցանկայ իմանալիւր և աշխարհի արարածոց ստեղծող և կառավարողը, Եկեղեցին և նորա սուրբ խորհուրդները, Աբեղական, Լուսնի, Աստեղաց և երկնքի ինչութիւնը, անձրևի, ձիւնի, կարկտի, երկրաշարժի, ծիածանի, կայծակի, որոտումի, ամպերի և տարուան չորս եղանակաց պատճառները, աշխարհիս մէջը գտնուած ծովերի, լիճների և քաղաքների անունները, և նորա բնակչաց թիւը, կենդանեաց տեսակները և նոցա բնաւորութիւնները, ծառերի, ծաղիկների, և խոտերի նճիցումները, հանքային նիւթոց յատկութիւնները, լսել հարկաւոր օգտակար և զուարճալի պատմութիւններ, սովրիլ փոքր 'ի շատէ կարդալ և գրել, և մանր մունր թուահաշիւներ, վերջապէս մի նոր մտաւորական ախորժակ կ'ունենայ նոր բաներ խորհիլ խօսիլ, լսել և գործել՝ առանց չարը բարիից որոշելու։

Զ.

Ուրեմն այնպիսի դեռահասակ մանուկների դաղափարը լուսաւորելու համար՝ հարկաւոր է ունենալ ճշմարիտ ուղղափառ կրօնի սկզբունք, բնական և քաղաքական աշխարհագրութեան, բնագիտութեան գիտելեաց, թուաբանութեան հաշիւների և բարոյականութեան կանոնների փոքր 'ի շատ, սեղեակ և կրթուած մայրեր, որոնց խնամոց ներքարկուած փոքրիկ մանուկներ՝ արդէն նախակրթուած և ճշմարիտ դաստիարակութեամբ զարգացած՝ մի ժամանակից յետոյ՝ մանում են Ուսումնարան, այնուհետև սկսում են ինքնայօժար սիրով և շատ գիւրին կերպով, և մանաւանդ կարճ միջոցումը սովորիլ կարևոր ուսմունքներ, և լինել՝ այրենեաց համար օգտակար անդամ. զի այն կերպով կրթուած մանուկների համար ունակութիւն եղած է մարմնական սննդեան հետ և հոգեկան սնունդ։ Ահա այս միջոցն է, որ 'ի գործ դրած են թէ Եւրոպացիք և թէ Ամերիկացիք. որով և այժմ զարգացած են թէ նիւթական և թէ բարոյական յառաջադիմութիւններով։ Ուրեմն նոցա օրինակին հետևելու, և զարգացման ասպիճանին հասնելու՝ պատրաստենք ուսեալ մայրեր, որով և ունենանք ուսեալ սերունդներ՝ Հայաստանի լուսաւորութեան համար։

ՄԵՍՐՈՎՊ ՔԱՀԱՆԱՅ ՓԱՓԱԶԵԱՆՑ։

Ի Պ. Ամ--լ--։

ՀԱՆԵԼՈՒԿՔ

1.

Այն որ կառքն է երկաթի,
Որ մի աշխարհ ինքեամբ ածի,
Ուր և կամի, շրջի, հանգչի,
Առանց անուի և հողովի։

2.

Այն որ տունկն է անհաստատ,
Արմատն ի վեր, ոստքն ի վայր,
Որ տայ պտուղ միշտ անընդհատ,
Մերթ քաղցրահամ, երբեմն էլ վատ։

Յովհաննէս Մէրաբիկեանց։

Դեկտ. ամսոյ հանելուկն է Հրդեհ։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ